ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4417-Ա « 08 » սեպտեմբերի 2026 թ.

ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Որոշմամբ լուծվող հարցի նկարագրությունը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Կարեն Բադալյանի 2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ Դ-84532-26 դիմումի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթների համաձայն իրականացվել է վարչարարություն:

2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ Դ-84532-26 դիմումով ներկայացված՝ վնասի փոխհատուցման պահանջի քննության կապակցությամբ 2026 թվականի օգոստոսի 27-ին և սեպտեմբերի 7-ին հրավիրված լսումներին ներկայացել և մասնակցել է Կարեն Բադալյանը:

Ուսումնասիրելով Կարեն Բադալյանի 2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ Դ-84532-26 դիմումը, գնահատելով նշված դիմումին, 2026 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ Դ-94168-26 դիմումին կից և լսումների ընթացքում ներկայացված ու վարչարարության շրջանակներում ստացված ապացույցները, վարչարարության շրջանակներում իրականացված լսումների վերաբերյալ 2025 թվականի օգոստոսի 27-ի և սեպտեմբերի 7-ի արձանագրությունները, ինչպես նաև գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքները, պարզվել է հետևյալը.

2. Որոշումն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ Դ-84532-26 դիմումով և լսումների ընթացքում ներկայացված դիրքորոշմամբ՝ Կարեն Բադալյանը, հիմք ընդունելով ««Քրեագետ» դատական և անկախ փորձաքննությունների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետի կողմից 2026 թվականի օգոստոսի 7-ին տրված թիվ Ք-064-16-26 ապրանքագիտական եզրակացությունը (այսուհետ՝ Ապրանքագիտական եզրակացություն), «Սաութ էքսպերտ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետի կազմած՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 26-00012-CRV դատահետքաբանական եզրակացությունը (այսուհետ՝ Հետքաբանական եզրակացություն), խնդրել է փոխհատուցել 2026 թվականի հունիսի 2-ին Աբովյան փողոցի թիվ 41 հասցեում կայանված՝ «Mercedes-Benz» մակնիշի «08 XU 080» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառ ընկնելու արդյունքում առաջացած վնասը, որը կազմում է 443.000 (չորս հարյուր քառասուներեք հազար) ՀՀ

դրամ, ինչպես նաև նշված եզրակացությունների դիմաց վճարված գումարը՝ որպես խախտված իրավունքների վերականգնման նպատակով կատարված ծախս:

2023 թվականի հունիսի 6-ին տրված՝ տրանսպորտային միջոցի հաշվառման թիվ YF260783 վկայագրի համաձայն՝ «Mercedes-Benz» մակնիշի «08 XU 080» հաշվառման համարանիշի ավտոմեքենան հանդիսանում է Կարեն Բադալյանի սեփականությունը:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնում ստացված հաղորդման վերաբերյալ կազմված թիվ Գ/Մ N 5208 նյութերի համաձայն՝ 2026 թվականի հունիսի 2-ին այց է կատարվել Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 41 հասցե, որտեղ պարզվել է, որ նույն հասցեում կայանված «Mercedes-Benz» մակնիշի «08 XU 080» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառ է ընկել, ինչի հետևանքով վնասվել են ավտոմեքենայի առանձին հատվածներ:

Ապրանքագիտական եզրակացության «Հետևություն» բաժնում փորձագետը, պատասխանելով փորձաքննությանը առաջադրված հարցին, այն է՝ որոշել փորձաքննությանը ներկայացված «Mercedes-Benz» մակնիշի «08 XU 080» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վնասի վերականգնման /նորմալ շահագործման վիճակի բերելու/ շուկայական արժեքը, նշել է, որ փորձաքննության օբյեկտ հանդիսացող «Mercedes-Benz» մակնիշի ավտոմեքենայի վնասվածքների /արատների/ և դրանց պատճառով առաջացած խափանումների հետևանքով, այդ ավտոմեքենայի վերականգնման ծախսերի /վնասի չափի/ (նորմալ շահագործողական վիճակի բերելու համար անհրաժեշտ դետալների, հանգույցների, վերանորոգման աշխատանքների շուկայական գները) չափը դրամական արտահայտությամբ, փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ գործող շուկայական գներով, կարող է կազմել 443.000 (չորս հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ:

Հետքաբանական եզրակացության «Հետևություններ» բաժնում փորձագետը, ելնելով փորձաքննությանը տրամադրված «Mercedes-Benz» մակնիշի «08 XU 080» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի թափքի արտաքին մակերեսին, ինչպես նաև սրահում առկա վնասվածքների տեղակայություններից, բնույթից, միմյանց հանդեպ ունեցած փոխդասավորություններից, համադրելով այդպիսիք միմյանց հետ, գտել է, որ դրանք իրենց համակցության մեջ կարող էին առաջանալ համապատասխան կառուցվածքային հատկանիշներ ունեցող կոշտ առարկայի/ների/ հետ փոխազդեցության մեջ մտնելու հետևանքով, որոնց առաջացումը հնարավոր է փորձաքննությանը տրամադրված դեպքի վայրում կատարված լուսանկարներում երևացող կոտրված ծառը նշված ավտոմեքենայի՝ նույն եզրակացության մեջ նկարագրված վնասված տեղամասերի վրա ընկնելու հետևանքով:

2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ Դ-84532-26 դիմումի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությունից 2026 թվականի օգոստոսի 18-ին ստացվել է պարզաբանում այն մասին, որ 2026 թվականի հունիսի 8-ին Կենտրոն վարչական շրջանի Աբովյան փողոց թիվ 41 հասցեում 2026 թվականի հունիսի 2-ին Կարեն Բադալյանին պատկանող «Mercedes-Benz» մակնիշի «08 XU 080» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա տապալվել է կենսունակ, սովորական հացենի, որը «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն»

համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մասնատվել և դուրս է բերվել տարածքից:

3. Որոշումն ընդունելու հիմնավորումները.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝ գույք՝ անշարժ գույք՝ հողամասերը, անշարժ գույք հանդիսացող ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա, այդ թվում նաև՝ կառուցվող շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1071.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 6367-2020 գրությամբ տրված պարզաբանման համաձայն՝ օրենքի իմաստով ծառը (անկախ դրա տեսակից) հանդիսանում է, որպես անշարժ գույք, դիտվում է որպես հողամասի պատկանելիք, հետևաբար չի կարող առանձին գրանցվել և սեփականության իրավունքով պատկանում է հողամասի սեփականատիրոջը (քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մաս):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝

բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա/ անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

բ/ վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 2015 թվականի հուլիսի 17-ին կայացված որոշմամբ անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նշել է, որ ապացույցի յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, ինչը կարող է պայմանավորված լինել ապացույցի կազմավորման բնույթով, աղբյուրով, արտահայտման ձևով և այլ գործոններով, հետևաբար անգամ ընդհանուր կարգով գնահատումն անհրաժեշտ է իրականացնել այդ առանձնահատկությունների հաշվառմամբ: Նույն որոշմամբ անդրադառնալով փորձագետի եզրակացության, որպես ապացույցի գնահատման առանձնահատկություններին, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը առանձնացրել է այն հիմնական չափորոշիչները, որոնք ենթակա են կիրառման ապացույցի գնահատումը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից իրականացնելիս: Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը գտել է, որ փորձագետի եզրակացությունը վերաբերելիության առումով գնահատելիս՝ նախևառաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե փորձագետին առաջադրված հարցերը որքանով նշանակություն ունեն գործի լուծման համար, ապա միայն անդրադառնալ այդ հարցադրումների վերաբերյալ արված եզրահանգումներին, թույլատրելիության տեսանկյունից գնահատման ենթարկելիս՝ առաջնահերթ կարևորվում է փորձաքննությունն իրականացնող անձի որակավորումը և ձեռնհասությունը, արժանահավատության տեսանկյունից գնահատելիս՝ պետք է հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը, ելակետային տվյալների բնույթը, փորձագետի

հետևությունների փաստարկվածության աստիճանը, եզրակացության համապատասխանությունը գործում առկա այլ ապացույցներին:

Դիմումատուի կողմից ներկայացված ապացույցներով հիմնավորված չէ այն հանգամանքը, որ Ապրանքագիտական եզրակացության մեջ զետեղված՝ «Փոխարինման և տեղադրման ենթակա պահեստամասեր», «Օգտագործվող նյութեր», «Վերանորոգման աշխատանքներ» վերտառությամբ աղյուսակներում ներառված պահեստամասերը, նյութերը և աշխատանքները համապատասխանում են Հետքաբանական եզրակացության մեջ նկարագրված՝ ծառն ընկնելու արդյունքում «Mercedes-Benz» մակնիշի «08 XU 080» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա առաջացած վնասվածքների ու հետքերի նկարագրին:

Ապրանքագիտական եզրակացությունը թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 2015 թվականի հուլիսի 17-ին կայացված որոշմամբ արտահայտված դիրքորոշման լույսի ներքո գնահատման ենթարկելու արդյունքում կարելի է փաստել, որ դրանում հղում կատարված չէ հայտնաբերված վնասվածքների կամ արատների առաջացման պատճառները գնահատող որևէ փորձագիտական եզրակացության, հետևաբար նշված Ապրանքագիտական եզրակացությունը չի հանդիսանում վերաբերելի ապացույց, քանի որ դրանով չի ապացուցվում «Mercedes-Benz» մակնիշի «08 XU 080» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառ ընկնելու արդյունքում առաջացած հետևանքների և 443.000 (չորս հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամի չափով գնահատված վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ Դ-84532-26 դիմումի հիման վրա իրականացված վարչարարությամբ և դրա շրջանակներում ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվել Կարեն Բադալյանի սեփականությունը հանդիսացող «Mercedes-Benz» մակնիշի «08 XU 080» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառ ընկնելու հետևանքով առաջացած ենթադրյալ վնասը Ապրանքագիտական եզրակացության համաձայն՝ 443.000 (չորս հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ կազմելու և փոխհատուցման ենթակա լինելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է փորձագիտական ծառայությունների դիմաց կատարված ծախսին, ապա այն ավտոմեքենային պատճառված վնասի փոխհատուցման հիմնական պահանջի նկատմամբ հանդիսանում է ածանցյալ պահանջ, հետևաբար հիմնական պահանջի իրավաչափությունն ապացուցված չլինելու և այդ հիմքով մերժման ենթակա լինելու պայմաններում փորձաքննության նպատակով կատարված ծախսի փոխհատուցման ածանցյալ պահանջը ևս բավարարման ենթակա չէ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնում թիվ Գ/Մ N 5208 հաղորդման կապացությամբ կազմված նյութերը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությունից 2026 թվականի օգոստոսի 18-ին ստացված պարզաբանումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ««Քրեագետ» դատական և անկախ փորձաքննությունների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի օգոստոսի 7-ին տրված թիվ Ք-064-16-26 ապրանքագիտական եզրակացության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի հիմնավորվել

դրանով «Սաութ էքսպերտ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 26-00012-CRV դատահետքաբանական եզրակացությամբ, որպես ծառն ընկնելու հետևանք նկարագրված վնասվածքները գնահատված լինելու հանգամանքը, ինչով պայմանավորված վարչարարությամբ չի հիմնավորվել պատահարի և ենթադրյալ վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ուստի ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով, 1058-րդ հոդվածի 1-ին մասով և 1071.1 հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Կարեն Բադալյանի՝ վնասը փոխհատուցելու մասին 2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ Դ-84532-26 դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ